Ս Խ Ե Մ Ա

Շինարարության շահագործման փաստագրման ակտ տրամադրելու ընթացակարգի

Իրավական ակտեր՝

- **<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք,**
- **ՀՀ կառավարության 08.05.2003թ. <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին>> հ.626-Ն**

Դիմում
(առաջին)
(դիմումի կատարումն ապահովվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից,
հասցե - Գրիգոր Լուսավորչի 7)

Դիմումին կցվում է

- Ֆիզիկական անձի անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց դեպքում պետական ռեգիստրի գրանցման վկայականի և տնօրենի անձնագրի պատճենները:

Կառուցապատողը կապալառուի կողմից շինարարությունն ավարտելու մասին հաղորդումն ստանալուց հետո դիմում է շահագրգիռ մարմիններին (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարան) ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունելու նպատակով իր կողմից ստեղծված հանձնաժողովի աշխատանքներում համապատասխան ներայացուցչին ներգրավվելու թեկնածություն ստանալու համար:

5 օրյա ժամկետում

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆ

Դիմում
(երկրորդ)
Շինարարության շահագործման փաստագրման ակտի ձևակերպման համար

(դիմումի կատարումն ապահովվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից,
հասցե - Գրիգոր Լուսավորչի 7)

Դիմումին կցվում է

- ընդունող հանձնաժողովի ակտը **կամ** երկկողմանի ակտը,
- երկկողմանի ակտի դեպքում՝ ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները,
- կատարողական փաստաթղթերի ցանկը,
- ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

5 օրյա ժամկետում

Դիմումը մերժելու մասին գրավոր պատասխան

Կրկնակի դիմում

3 օրյա ժամկետում

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծանոթություն

– կառուցապատողն իր ցանկությամբ՝ դիմումներին կից, կարող է ներկայացնել նաև հարցին առնչվող լրացուցիչ այլ տեղեկություններ

– լրացուցիչ խորհրդատվություն կամ տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է դիմել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն՝ 010 54-70-67 կամ 010 52-12-52 հեռախոսահամարներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ_____

Կառուցապատող՝

_____-ից
(անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի անվանում)

_____
(կառուցապատողի բնակության կամ հաշվառման հասցե)

_____
(հեռախոսահամար)

Դ Ի Մ Ո Ւ Մ

_____հասցեում
(կառուցապատման հասցե)

իրականացվել են _____
(կառուցված օբյեկտի նկարագրություն)

_____

շինարարական աշխատանքները:

Խնդրում եմ ՀՀ կառավարության 08.05.2003թ. հ.626-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ձևակերպել ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտը:

Դիմող՝ _____ _____
(ստորագրություն) (անուն և ազգանուն)

«.....» ..... 20 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ _____

Կառուցապատող _____

(անուն - ազգանուն կամ անվանում)

_____

(բնակության հասցե - հեռախոս)

_____

Դ Ի Մ Ո Ւ Մ

Շինարարական աշխատանքներն ավարտված _____

(կառուցապատման օբյեկտի հասցեն)

_____

_____

(կառուցապատման օբյեկտի անվանումը)

շահագործման ընդունող հանձնաժողովի կազմում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ներկայացուցչին ընդգրկելու նպատակով խնդրում եմ տալ համապատասխան թեկնածություն:

Դիմող՝ _____ _____

(ստորագրություն) (անուն և ազգանուն)

«.....» ..... 20 թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

_____

_____

_____

(ակտը հաստատող անձի անունը, ազգանունը և պաշտոնը)

_____ _____ 20 թ.

Ա Կ Տ

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

_____ _____ 20 թ. Օբյեկտի անվանումը և տեղադրությունը

_____

Ընդունող հանձնաժողովը կազմավորված է _____

(հրամանով, հանձնարարականով, որոշմամբ)

_____ կողմից

(կառուցապատողի անվանումը (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ., հետևյալ կազմով՝

Նախագահ՝ կառուցապատող (ներկայացուցիչ)

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Հանձնաժողովի անդամներ՝ ներկայացուցիչներ՝

Գլխավոր կապալառու _____

(անվանումը)

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ենթակապալառու կազմակերպություն _____

(անվանումը)

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Շահագործող կազմակերպություններ՝

_____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

Վերահսկող կազմակերպություններ՝

_____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

Այլ շահագրգիռ կազմակերպություններ՝

_____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

Հեղինակային հսկողություն իրականացնող _____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

Տեխնիկական հսկողություն իրականացնող _____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1.Գլխավոր կապալառու _____ կողմից

(անվանումը)

շահագործման ընդունմանն է ներկայացված շինարարական աշխատանքներն ավարտված

_____

(օբյեկտի անվանումը, շինարարական կապալի պայմանագրի N)

2.Շինարարական աշխատանքներն սկսված են համաձայն _____

_____ կողմից տրված

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

____ _____ 20 թ. N _____ շինարարության թույլտվության

3.Շինարարությունն իրականացված է _____

_____

(գլխավոր կապալառուի անվանումը, շինարարական կապալի պայմանագրի N)

_____ կողմից

4. Շինարարության իրականացման ժամկետը՝

աշխատանքների սկիզբը _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

աշխատանքների ավարտը _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

Շինարարության տևողությունը՝

նախատեսված՝ _____

(ամիսներով)

փաստացի՝ _____

(ամիսներով)

5.Օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ _____

(համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի)

_____

_____

6. Ընդունող հանձնաժողովին տրամադրված են հետևյալ փաստաթղթերը՝

շինարարության թույլտվությունը _____

հաստատված նախագծային փաստաթղթերը _____

կատարողական փաստաթղթերը _____

(սույն կարգի 6-րդ կետով նախատեսված կազմով)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Շահագործման ընդունմանը ներկայացված _____

(օբյեկտի անվանումը)

ՊԱՏՐԱՍՏ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

Հանձնաժողովի նախագահ _____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ _____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____

_____

_____

_____

Ձև 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա Կ Տ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ

N_____ _____ _____ 2010 թ.

Կառուցապատող _____ կողմից կառուցված

(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

որը գտնվում է _____

_____

(օբյեկտի անվանումը և տեղադրումը)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

ա) նախագծային փաստաթղթերը մշակվել են _____

(նախագծային կազմակերպության անվանումը,անհատ ձեռնարկատիրոջ անունը,ազգանունը)

_____ կողմից

բ) շինարարությունն սկսվել է _____

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

_____ կողմից

տրված 200 թ. N _____ շինարարության թույլտվության համաձայն.

գ) շինարարությունն իրականացվել է _____

(գլխավոր կապալառուի անվանումը)

_____ կողմից

դ) օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ _____

_____

_____

ե) հատուկ պայմանները _____

_____

_____

ՀԻՄՔԵՐ՝

ա) կառուցապատողի դիմումը _____ 200 թ.

բ) ընդունող հանձնաժողովի ակտը _____ 200 թ.

կամ

երկկողմանի ակտը՝ քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացություններով.

գ) կատարողական փաստաթղթերի ցանկը _____ թերթ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

«_____» _____ 2010թ.

Համարը	N 626-Ն	Տեսակը	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2003.06.25/34(269) Հոդ.572	Ընդունման վայրը	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը	08.05.2003
Ստորագրող մարմինը	ՀՀ Վարչապետ	Ստորագրման ամսաթիվը	03.06.2003
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը	07.06.2003
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05.07.2003	Ուժը կորցնելու ամսաթիվը	

Մայր փաստաթուղթ: Կառավ,08.05.2003,N 626-Ն

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝	Համապատասխան ինկորպորացիան՝
Կառավ,29.06.2005,N 950-Ն	Կառավ,08.05.2003,N 626-Ն
Կառավ,29.12.2005,N 2407-Ն	Կառավ,08.05.2003,N 626-Ն
Կառավ,09.04.2009,N 359-Ն	Կառավ,08.05.2003,N 626-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
7 հունիսի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2003 թվականի N 626-Ն

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի «Շինարարության ավարտի փաստագրման կարգը հաստատելու մասին» N 477 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2003 թ. հունիսի 3
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
մայիսի 8-ի N 626-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում իրականացված շինարարության (շենքերի, շինությունների, դրանց վերակառուցման, վերականգնման, ամրացման, արդիականացման, ընդլայնման և բարեկարգման՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) շահագործման ընդունման փաստագրման կարգը:

2. Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտի ձևակերպմամբ՝ N 1 ձևը կցվում է, հաստատված նախագծով ու շինարարական կապալի պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվելուց և օրենքով ու սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կապալառուի կողմից ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո:

3. Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրում է՝ համայնքում՝ համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

(3-րդ կետը խմբ. 29.12.05 N 2407-Ն, 09.04.09 N 359-Ն)

3[1]. ***(3[1] կետն ուժը կորցրել է 09.04.09 N 359-Ն)***

4. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ հատկապես վտանգավոր և տեխնիկապես բարդ օբյեկտների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող օբյեկտների շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է այդ որոշմամբ ստեղծված

ընդունող հանձնաժողովի կողմից՝ անհրաժեշտության դեպքում սույն կարգը լրացնող հատուկ պահանջների ամրագրմամբ, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5. Ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին ամրագրվում է կապալառուի ու կառուցապատողի միջև կազմված երկկողմանի հանձնման-ընդունման ակտով (այսուհետ՝ երկկողմանի ակտ) կամ օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողովի ակտ)՝ N 2 ձևը կցվում է, և հիմնավորվում է կատարողական փաստաթղթերով, ինչպես նաև ինժեներական, տեխնոլոգիական սարքավորումները, ենթակառուցվածքային օբյեկտներն ու ցանցերը շահագործող կազմակերպությունների (այսուհետ՝ շահագործող կազմակերպություններ) եզրակացություններով: Շահագործող կազմակերպություններին վերաբերող, սույն կարգով սահմանված դրույթները գործում են օրենքով և կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

6. Կատարողական փաստաթղթերի փաթեթը կազմում է կապալառուն՝ տեխնիկական հսկողություն, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ: Կատարողական փաստաթղթերի կազմը և ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

7. Կատարողական փաստաթղթերի կամ դրանց մի մասի բացակայության դեպքում կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին վերականգնել դրանք՝ անհրաժեշտ տեխնիկական հետազոտություններ կամ փորձարկումներ կատարելու միջոցով:

8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ, ինչպես նաև, անկախ ֆինանսավորման աղբյուրից՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, սահմանված կարգով հաստատված պետական ցուցակներում ընդգրկված հանրապետական նշանակության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 19-ի N 882 որոշմամբ հաստատված հատուկ օբյեկտների և կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների շինարարության շահագործման փաստագրման համար պարտադիր հիմք է հանդիսանում ընդունող հանձնաժողովի ակտը: Ընդունող հանձնաժողովի ակտը պարտադիր է նաև այն դեպքերում, երբ կառուցապատողն օրենքով իրավունք ունի հանդես գալու որպես շինարարական աշխատանքներ իրականացնող, որի հետևանքով անհնարին է դառնում սույն կարգի 5-րդ կետով նախատեսված երկկողմանի հանձնման-ընդունման ակտի ձևակերպումը:

9. Կառուցապատողի ցանկությամբ հանձնաժողով կարող է ստեղծվել նաև սույն կարգի 8-րդ կետով չնախատեսված դեպքերում:

10. Հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը (բացառությամբ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դեպքերի):

11. Հանձնաժողովի կազմում ներգրավվում են կառուցապատողի, կապալառուի, տեխնիկական հսկողություն և, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձինք, քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի (այսուհետ՝

տարածքային բաժին), շահագործող կազմակերպությունների, ինչպես նաև օրենքով համապատասխան վերահսկողական իրավասություններով օժտված այլ շահագրգիռ պետական մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ պետական մարմին) և սույն կարգի 3-րդ և 3[1]-րդ կետերով սահմանված ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրող մարմնի (այսուհետ՝ իրավասու մարմին) ներկայացուցիչները:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվող խոշոր ծավալների (գնումների բազային միավորի 250-ապատիկը գերազանցող) շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողովների կազմում լրացուցիչ ընդգրկվում են նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև սույն կետի առաջին պարբերության համաձայն չներառված լինելու դեպքում՝ համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչները:

(11-րդ կետը լրաց. 29.06.05 950-Ն, փոփ. 29.12.05 N 2407-Ն)

12. Կառուցապատողը կապալառուի կողմից շինարարությունն ավարտվելու մասին հաղորդումն ստանալուց հետո, մինչև հանձնաժողովի աշխատանքներն սկսելը, դիմում է շահագրգիռ պետական մարմիններին (օրենքով սահմանված դեպքերում) և շահագործող կազմակերպություններին (եթե օբյեկտի շահագործման համար անհրաժեշտ է կնքել համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կամ առկա պայմանագրում կատարել փոփոխություն)՝ հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվելու առաջարկությամբ, որի վերաբերյալ 5-օրյա ժամկետում ստանում է համապատասխան ներկայացուցչի թեկնածությունը: Հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է կառուցապատողի հաշվին:

(12-րդ կետը փոփ., լրաց. 29.06.05 950-Ն, փոփ. 29.12.05 N 2407-Ն)

13. Ընդունող հանձնաժողովի ակտը պետք է ստորագրված լինի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որոնցից յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում պատասխանատվություն է կրում հանձնաժողովի կողմից ընդունված որոշման համար՝ օրենքով սահմանված կարգով:

14. Ընդունող հանձնաժողովի անդամն ակտը չստորագրելու դեպքում նախագահին է տրամադրում իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները: Նշված թերությունները պետք է վերացվեն շինարարական կապալի պայմանագրով սահմանված ժամկետում, այլապես օբյեկտը հանձնաժողովի կողմից շահագործման չի ընդունվում:

(14-րդ կետը փոփ. 29.06.05 950-Ն)

15. Առանց հանձնաժողովի օբյեկտը շահագործման ընդունելու դեպքում, կապալառուի կողմից շինարարությունն ավարտվելու մասին հաղորդումն ստանալուց հետո, կառուցապատողը համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով դիմում է շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև տարածքային բաժնին՝ ներկայացնելով օբյեկտի համապատասխան կատարողական փաստաթղթերը:

(15-րդ կետը փոփ. 29.06.05 950-Ն)

16. Դիմումն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում տարածքային բաժինը, շահագրգիռ մարմինները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում, տալիս են եզրակացություն՝ հավաստելով ավարտված շինարարական աշխատանքների համապատասխանությունը տրամադրված տեխնիկական պայմաններին և սույն կարգի պահանջներին: Ընդ որում, ստացված եզրակացությունները հիմք են

հանդիսանում շահագործող կազմակերպությունների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար:

(16-րդ կետը փոփ. 29.06.05 950-Ն)

17. Տրամադրված տեխնիկական պայմաններին և սույն կարգի պահանջներին՝ ավարտված շինարարական աշխատանքների անհամապատասխանության դեպքում տարածքային բաժինը, և (կամ) շահագրգիռ մարմինը նշված ժամկետում պարտավոր է կառուցապատողին տրամադրել իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները: Նշված թերությունները վերացնելուց հետո կառուցապատողը կրկին դիմում է համապատասխան մարմնին, որը եռօրյա ժամկետում տալիս է իր եզրակացությունը:

(17-րդ կետը փոփ. 29.06.05 950-Ն)

18. Կառուցապատողի ցանկությամբ շինարարական համալիրի կազմում ընդգրկված առանձին շենքերի և շինությունների շահագործման ընդունումը կարող է ձևակերպվել ըստ դրանց շինարարության ավարտի:

19. Ձմռան ամիսներին ձևակերպվող շահագործման ակտով կարող է նախատեսվել շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքները մոտակա գարնանային-ամառային ամիսներին իրականացնելու վերաբերյալ պայման: Այդ աշխատանքներն ավարտվում են շահագործման ակտով սահմանված ժամկետում և ընդունվում կառուցապատողի կողմից շահագործումը փաստագրող իրավասու մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ՝ համապատասխան նշում կատարելով շահագործման ակտում:

20. Շինարարական կապալի պայմանագրով կարող է նախատեսվել անհատական բնակելի տների և դրանց կից տնտեսական շինությունների, ինչպես նաև առևտրային իրացման նպատակով կառուցված բազմաբնակարան բնակելի շենքերի, այդ թվում՝ ներկառուցված ոչ բնակելի տարածքներով, շինարարական աշխատանքների ոչ լրիվ իրականացումը, որի դեպքում շահագործման ընդունման ակտը ձևակերպվելուց հետո շինարարական աշխատանքները՝ ցանկը կցվում է, կատարվում են նոր սեփականատիրոջ կողմից, ընդ որում, բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների շինարարական աշխատանքները, ինչպես նաև ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքները պարտադիր պետք է իրականացվեն ամբողջությամբ:

21. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է իրավասու մարմնին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:

Դիմումին կցվում են՝

ա) ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը.

բ) երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները.

գ) կատարողական փաստաթղթերի ցանկը.

դ) ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

22. Իրավասու մարմինը ներկայացված փաստաթղթերի հիման վրա դիմումը տալու օրվանից 5-օրյա ժամկետում ձևակերպում և կառուցապատողին է հանձնում շահագործման ակտը կամ դիմումը մերժելու մասին գրավոր պատասխանում է դիմողին, նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է

պատճառաբանվել միմիայն սույն կարգի 21-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

23. Իրավասու մարմնի առաջադրած պահանջները բավարարվելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:

24. Շահագործման ակտը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է իրավասու մարմնի մոտ, մեկական օրինակ տրվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմնին:

25. Համայնքի ղեկավարը շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո եռօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է համապատասխան մարզպետին և տեսչության տարածքային բաժնին՝ կցելով շահագործման ակտի պատճենը:

(25-րդ կետը փոփ. 09.04.09 N 359-Ն)

26. Մարզպետը համայնքի վարչական սահմաններից դուրս տարածքներում շահագործման ակտերի ձևակերպման մասին եռօրյա ժամկետում ծանուցում է քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով շահագործման ակտի պատճենը:

(26-րդ կետը փոփ. 09.04.09 N 359-Ն)

27. Շահագործման ակտը հիմք է հանդիսանում կառուցված օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքների գրանցման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ տվյալ օբյեկտի շահագործման իրավունքի ամրագրված սահմանափակումը դադարեցնելու համար:

28. Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումն իրականացվում է գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա Կ Տ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ

N ____ ____ _____ 200 թ.

Կառուցապատող _____ կողմից կառուցված,
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

որը գտնվում է _____

_____
(օբյեկտի անվանումը և տեղադրությունը)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

ա) նախագծային փաստաթղթերը մշակվել են _____
(նախագծային կազմակերպության անվանումը,
անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
_____ կողմից.

բ) շինարարությունն սկսվել է _____
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

_____ կողմից

տրված ____ _____ 200 թ. N ____ շինարարության թույլտվության համաձայն.

գ) շինարարությունն իրականացվել է _____ կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)
_____

դ) օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ _____

_____

_____

ե) հատուկ պայմանները _____

_____

_____

ՀԻՄՔԵՐ՝
ա) կառուցապատողի դիմումը ____ _____ 200 թ.
բ) ընդունող հանձնաժողովի ակտը ____ _____ 200 թ.
կամ

երկկողմանի ակտը՝ քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացություններով.
գ) կատարողական փաստաթղթերի ցանկը _____ թերթ

Հայաստանի Հանրապետության մարզպետ, համայնքի ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) *(անունը, ազգանունը)*

____ _____ 200 թ.

(N1 ձևը փոփ. 09.04.09 N 359-Ն)

Հավելված 2

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

_____

_____

_____

(ակտը հաստատող անձի անունը, ազգանունը և պաշտոնը)

____ _____ 200 թ.

Ա Կ Տ

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

____ _____ 200 թ. Օբյեկտի անվանումը և տեղադրությունը _____

Ընդունող հանձնաժողովը կազմավորված է _____

(հրամանով, հանձնարարականով, որոշմամբ)

_____ կողմից

(կառուցապատողի անվանումը (անունը, ազգանունը)

_____ _____ 200 թ., հետևյալ կազմով՝

Նախագահ՝ կառուցապատող (ներկայացուցիչ)

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Հանձնաժողովի անդամներ՝ ներկայացուցիչներ՝

Գլխավոր կապալառու _____

(անվանումը)

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ենթակապալառու կազմակերպություն _____

(անվանումը)

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Շահագործող կազմակերպություններ

1. _____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

2. _____

(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

3. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

Վերահսկող կազմակերպություններ՝

1. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

2. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

3. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

Այլ շահագրգիռ կազմակերպություններ՝

1. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

2. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

3. _____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

Հեղինակային հսկողություն իրականացնող
_____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)
_____

Տեխնիկական հսկողություն իրականացնող
_____
(անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)
_____

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Գլխավոր կապալառու՝ _____ կողմից
(անվանումը)

շահագործման ընդունմանն է ներկայացված շինարարական աշխատանքներն ավարտված _____
(օբյեկտի անվանումը, շինարարական կապալի պայմանագրի N)

2. Շինարարական աշխատանքներն սկսված են համաձայն
_____

_____ կողմից տրված
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

_____ _____ 200 թ. N _____ շինարարության թույլտվության

3. Շինարարությունն իրականացված է _____

_____
(գլխավոր կապալառուի անվանումը, շինարարական կապալի պայմանագրի N)
_____ կողմից

4. Շինարարության իրականացման ժամկետը՝

աշխատանքների սկիզբը _____
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

աշխատանքների ավարտը _____
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

Շինարարության տևողությունը՝

նախատեսված՝ _____
(ամիսներով)

փաստացի՝ _____
(ամիսներով)

5. Օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ _____
(համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի)

_____

_____

6. Ընդունող հանձնաժողովին տրամադրված են հետևյալ փաստաթղթերը՝

շինարարության թույլտվությունը _____

հաստատված նախագծային փաստաթղթերը _____

կատարողական փաստաթղթերը _____
(սույն կարգի 6-րդ կետով նախատեսված կազմով)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Շահագործման ընդունմանը ներկայացված _____
(օբյեկտի անվանումը)

ՊԱՏՐԱՍՏ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

Հանձնաժողովի նախագահ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____

_____

Ց Ա Ն Կ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՉԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՍՈՒՅՆ ԿԱՐԳԻ 20-ՐԴ ԿԵՏԻ

Ներբնակարանային և ներկառուցված ոչ բնակելի տարածքների ներքին սենքերի՝

ա) դռների և լուսամուտագոգերի տեղադրում.

բ) ներքին հարդարման աշխատանքներ՝ ներառյալ հատակների ծածկույթի (մանրահատակ, կերամիկական սալիկներ, լինոլեում և այլն), սվաղի, պատերի երեսապատման (կերամիկական սալիկներ, պաստառներ և այլն) և ներկման աշխատանքներ.

գ) ջրմուղ-կոյուղու ցանցի իրականացում՝ սանտեխսարքավորումների տեղադրմամբ.

դ) էլեկտրագծերի ցանցի իրականացում՝ վարդակների, սարքերի և սարքավորումների տեղադրմամբ.

ե) հեռուստակապի համակարգի, հեռախոսակապի, ռադիոկապի տեղադրում.

զ) ծխահրդեհային տեղեկացման ավտոնոմ սարքերի տեղադրում.

է) ներկառուցված կահույքի իրականացում: